



**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
նախագահ պրն. Ա. Զավադյանին**

Հարգելի պարոն Զավադյան

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կանոնակարգ 4/04-ի, 50-րդ կետի Ձեզ եմ ներկայացնում <Շեն Հոլդինգ> ՓԲԸ-ին վերաբերող 26.11.13թ-ի էական տեղեկությունը, որը նաև տեղադրված է մեր պաշտոնական էլեկտրոնային կայքի www.shenholding.com հաշվետվություններ բաժնում (կցվում է առդիր 1 թերթ):

**Հարգանքով
Շեն Հոլդինգ ՓԲԸ
Գլխ. գործ. տն.**



Պապ Բադալյան

“Shen-Concern” CJSC

address: 2/2 Shirak str., Yerevan 0043,
Republic of Armenia

tel./fax: (+374 10) 46 01 01

e-mail: info@shenholding.com
url: www.shenholding.com

26.11.13թ.

համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝ բացահայտում եմ «Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը.

«Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ն (այսուհետև՝ Ընկերություն) վերահաստատեց Հայաստանի կապիտալի շուկայում իր ակտիվ դերակատարությունը պահպանելու մտադրությունը և 20.11.13թ-ից մինչև 25.11.13թ-ը հաջողությամբ տեղաբաշխեց 40,000 (քառասուն հազար) հատ, 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, տարեկան 11% եկամտաբերությամբ, 60 ամիս շրջանառության ժամկետով, ոչ փաստաթղթային, անվանական, արժեկտրոնային պարտատոմսեր: Վերջինս ձեռք բերեցին ընդհանուր թվով 26 ֆիզիկական և 6 իրավաբանական անձինք:

25.11.13թ-ին Ընկերությունը մարեց 2010թ-ի նոյեմբերին թողարկված 1.5մլրդ դրամի պարտատոմսերի մայր գումարները և տոկոսները: Նշենք, որ 2010թ-ի պարտատոմսերի թողարկումից ստացված գումարը ուղղվել էր Հանթսման Բիլդինգ Փրոդաքթս ՍՊԸ-ի բաժնետոմսերի ձեռքբերմանը, որի արդյունքում Ընկերության Երևան քաղաքի արտադրական հրապարակի տարածքը ավելացավ ևս 4.2 հա-ով: Տվյալ տարածքում արդեն իսկ գործում է 2012թ-ին կառուցված բետոնե բլոկների 2-րդ արտադրամասը, ինչպես նաև տվյալ տարածքի մի մասը ծառայում է որպես Շեն Դեկոր խանութների ցանցի պահեստային տնտեսություն: Տվյալ տարածքի վրա Ընկերությունը մտադրություն ունի ավելացնել նոր արտադրություններ՝ մասնավորապես գիպսի վերամշակման և չոր շաղախների արտադրության թվով 3-րդ արտադրամասերը, ինչպես նաև ընդլայնել մանրածախ վաճառքի համար նախատեսված ապրանքների պահպանման պահեստային տնտեսությունը: